

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարկիսի	6 "
վեցամսեայ	6 "
Արսասահմանի համար	15 "
սարկիսի	8 "
վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար	3 ռյ.
սարկիսի	1 50 "
վեցամսեայ	1 50 "

Դասնորգում սուր սուր լինելու համար 40 ս. լակ վերջին երեսին համար 20 սանքիսի է. երեսին աւելի ակզամեւում համար 20 0/0 զեղջ կըլայ:

Վառնայի համար 40 սանքիսի

ՇԱՐՄՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՄՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Նամակի և գրամ գրկի խմբագրութան հասցիք

Редакция на вѣстника „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ Yarna (Bulgarie)

Պուշկարիոյ համար 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և ս յեւ սր ու յր

«ՇԱՐՄՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵՆԸ»

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԸ

Մեր գուշակութիւնները տեղի են ունենում. Հմայակ խուշուրեւան երեւան է գալիս իր իսկական նկարագրով, որը ինչ ինչ հաշիւներով թագգրել էր առժամանակ:

Մեր առաջին քննադատական յօդուածների առթիւ խուշուրեւանի հայրենակից Ազնաուրեւան ազան յոխորտացել էր թէ նա ոչ «ճարժում» էր կը վախնայ և ոչ գաշնակցականներէն. ինչպէս կերելի խեղճորոյս ազգայի յոխորտանքները մեծ սիրտ են տըւել մըզմը խուշուրեւանին և նա իր միապետական ձգտումները այնքան է առաջ տարել որ դպրոցի ուսուցիչները պարտաւորված են եղել մի խոշոր ընդհարում ունենալ միապետ տեսչի հետ, այն էլ աշակերտների ներկայութեանը. որոնք և այսօր իրենց աներում պատմում են:

Այդ բաւական չէ, ընդհարումը անցել է և բարձ. մարմին, հոգաբարձութեան, որը պարտաւորված է եղել խուշուրեւանի խիստ յանդիմանել, ի ներկայութեան ուսուցիչներին:

Մի խօսքով վերջին օրերում դպրոցական մարմինների մէջ այնքան խոշոր ընդհարումներ են տեղի ունեցել, որոնց նմանը ոչ մի ժամանակ չէ պատահել. Գոնէ մենք չենք յիշում որ ու է տնօրէն Վարնայի հոգաբարձութեան կողմից այնքան անարգանքի արժանացած լինի, որչափ այսօր խուշուրեւանն է արժանանում. և չենք յիշում այնպիսի մի գէպը որ ամբողջ ուսուցչական մի մարմին հոգաբարձութեանը ստորագրել տնօրէնին, որ չը գրիտէ մնալ իր իշխանութեան սահմանների մէջ և ուսուցիչների հետ ուղում է վարժիկ ինչպէս մեքենաների հետ:

Ճմարիտն ասած մենք չէինք սպասում որ ներկայ ուսուցչական

խումբը այդ քան շուտով բարձր էր խուշուրեւանի ինչ լինելը և երանդուն միջոց ձեռք առնէր սանձահարելու նրան:

Բայց մենք չէինք սպասում նաեւ Հմայակ խուշուրեւանից այնքան անկում, որ մի կտոր հացի համար այնքան ստորնահար ու կրկին մտնէր այն հիմնարկութեան մէջ, որտեղից նրան մատով դուրս են սպառնացել եթէ չը հնազանդի:

Թերեւս խուշուրեւանը այդ դառ հապը կլլել է միայն յուսալով թէ՛ իր պաշտպան Ազնաուր ազայի միջոցով կը յաճողի սանձահարել տալ ուսուցիչներին և հոգաբարձութեանը, ու նոյն իսկ վրէժ լուծել:

Սակայն իսխ յոյսեր. Մենք Տրապիզոնում չենք. Ազնաուր ազայի ուժերը այստեղ շատ ու շատ թոյլ են:

ՎԱՐՇՈ

ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ի նկատի ունենալով Պ. Ս. Գուլումեանի բարի կամեցողութիւնները և ստոյգ արիւրներէ տեղեկացած ըլլալով թէ խոստացած է օժտել իւր ծննդավայրը շնորհքով աղջկանց դպրոց և մանկապարտէզով մը կը շնորհաւորեմք զինքը իւր առտաձեռնութեամբ և պարտաճանաչութեամբ որ ասպագայ սերունդի գլխաւոր հոգը իւր վրայ առնելով երախտապարտ պիտի ձգէ այն ծնողները որոնք իրենց նիւթական նազ կարողութեամբ ստիպուած պիտի ըլլային իրենց աղջիկ գաւակները տգիտութեան մէջ ձգել որն որ վերջին ծայր դժբախտութիւն մըն է յառաջադիմութեան ծարաւէն տառապող ժողովուրդի մը համար:

Պ. Ս. Գուլումեանը միակ անձնաւորութիւնն է որ արժանացած է ժողովուրդի ամեն զսակարգի պատուին, պարտուա զսակարգէն մինչև յետին աղքատը գրիտէ Պ. Ս. Գուլումեանի Ռուստուկի համայնքին օգտակար հաստատութեանց համարը բաժնիւթական գրողութիւնները և ստոր համար ալ մենք մեր կողմէն կառավարկենք անմահացնել իւր անունը իւր նոր շինելիք դպրոցին անուանակոչութեամբ:

Մենք իմացած ըլլալով Պ. Ս. Գուլումեանի մի որոշ ժամանակ Ռուստուք մնալը կը խնդրեմք որ յանձն առնէ մի բարոյական պարտականութիւն եւս բարեհաճելով կարգադրել այն կնճոտ խնդիրները որ պատճառ եղած է կարգ մը անտեղութիւններու և աւելի սպառնական դառնալու երեւոյթն ունի յառաջիկայի համար. մեր ակնարկածը տեղացիի և ոչ տեղացիի խնդիրն է որ ինք Պ. Ս. Գուլումեանն իւր ցաւակցութիւնը յայտնած էր իր կոչման անարժան մըջնիկեան տէր պապին իրիւս խաղաղութեան պաշտօնեայի:

Պ. Ս. Գուլումեանը իր վրայ արդէն փորձած ըլլալով ոչ տեղացի ունեցած եկեղեցական իրաւունքները՝ ինչ որ ինք կը վայելէ Մանչեսթրի հայ համայնքին հետ երբէք հակումը չպիտի ունենայ զէպի այդ տկարամիտները որոնք այսօր արդէն Ռուստուկի եկեղեցին բաժնեցին այնպիսի բոլոր հայ եկեղեցիներէն ոտքի տակ տալով սանձահարական որոշ օրէնքը և օժտելին անանուն օրէնքով մը որուն նմանը ոչ մի տեղ չէ տեսնուած. պարծանք իրենց և նախատինք հայ ազգի որ եկեղեցւոյ պատէն վար կախած էին այն գրութիւնը որով կառավարութիւնը կը վաւերացնէր նոր թաղականութիւնը իւր պաշտօնին մէջ, իսկ հաշիւներու մասին ոչ մի գրութիւն և մեր յօդուածներուն ոչ մի պատասխան որով մենք մեզ ազատած կըլլանք այն բոլոր պատասխանատուութիւններէն որն յառաջիկան պիտի ալաւորէ:

Հետաքրքիր նրիսասարդներ 25 նոյեմբեր 1904 Ռուսում

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Իսխիմիա, 23 նոյ. 1904

Սլիվէն սահմանափակ քաղաք մը, մանաւանդ պարտուակող նուազ հայրութիւն մը, արդարեւ լրագրական շատ քիչ նիւթ կը մատակարարէ. վաղուց է Սլիվէնի ազգ. կեանքէն բան մը գրուած չէ. թէեւ հոս ալ պակաս չեն եղած ազգ. ու դպրոցական խնդիրներ. հոս չը կայ ընթերցարան, չունինք նաեւ շնորհքով մի ընկերութիւն. եղածներն անկանոն եւ գրեթէ չուտ ժամանակի մէջ մարած. բարի կամք եւ ազգօգուտ աշխատութիւնն է որ կը պակսի. կը կը յիշեմ աղքատախնայը, կանանց «Արաքս» ընկերութիւնը եւ պատանիներու խումբը, որոնք կէս ճամբան մնացած՝ դադրած են գործել, չը կայ քննադատական ոգի չը կայ մղում զէպի լաւ ու զէպի բարին, ամէն ինչ իր կամքին ձգուած է. եւ այս ամենուն պատճառն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ գաղափարական երիտասարդները չզոյւթին, արդարեւ պատահաւորաբար միայն մի միջոցով կարելի է չեն անկերտները սլքտալով. իրենց պարտոյ ժամերը թղթախաղով միայն կանցունեն, եւ որ ցաւալին է չեն հետաքրքրուիր ընաւ ազգ. կեանքով ոչ տեղացի երիտասարդներ թէեւ միջին լուրջ. բայց անոնք ալ իրենց գործերով զբաղուած, ազգօգուտ ձեռնարկ մը ընելու եռանդ ու կորովը չունին. Անուրտնալի ճշմարտութիւն մըն է որ վարժարանը ազգի մը յառաջադիմութեան ամենամեծ ազգակալ է. եւ մեր եկեղեցին է որ իւր կառուածներով օժանդակ եղած է վարժարանին եւ պատճառ նորա յարատեւութեան. արդարեւ յազգ. թիւ յուլումեանի գէպի վարժարանն ունեցած սէրն ու գուրգուրանքը գովելի է, սակայն տեսականին մէջ միայն, գործնականին մէջ շատ անփոյթ. զանազակ եւ թոյլ նոյնիսկ դպրոցական սրտեց վճարմամբ. սիդն է յիշել, կառուածաւոր հարուստ մը՝ որուն անունը տալ չեմ ուզիր, եւ որ տալու միշտ տրամադրութիւն ունի, ու կը խոստանայ թէեւ. հակառակ իր զաւակները ազգ. վարժարանը յաճախելուն սակայն երկու երեք տարիէ ի վեր ոչինչ տուած է վարժարանին, հոգաբարձութիւնն ալ ձեւի, խախտ համար ձայն չը հաներ. բայց մենք կը յուսանք թէ մեր այս երկտողը խրթան մը կըլլայ նոյն հարուստի. եթէ ոչ պիտի ստիպուինք իւր անունը հրապարակաւ յայտարարել:

Եւ մնացած՝ դադրած են գործել, չը կայ քննադատական ոգի չը կայ մղում զէպի լաւ ու զէպի բարին, ամէն ինչ իր կամքին ձգուած է. եւ այս ամենուն պատճառն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ գաղափարական երիտասարդները չզոյւթին, արդարեւ պատահաւորաբար միայն մի միջոցով կարելի է չեն անկերտները սլքտալով. իրենց պարտոյ ժամերը թղթախաղով միայն կանցունեն, եւ որ ցաւալին է չեն հետաքրքրուիր ընաւ ազգ. կեանքով ոչ տեղացի երիտասարդներ թէեւ միջին լուրջ. բայց անոնք ալ իրենց գործերով զբաղուած, ազգօգուտ ձեռնարկ մը ընելու եռանդ ու կորովը չունին. Անուրտնալի ճշմարտութիւն մըն է որ վարժարանը ազգի մը յառաջադիմութեան ամենամեծ ազգակալ է. եւ մեր եկեղեցին է որ իւր կառուածներով օժանդակ եղած է վարժարանին եւ պատճառ նորա յարատեւութեան. արդարեւ յազգ. թիւ յուլումեանի գէպի վարժարանն ունեցած սէրն ու գուրգուրանքը գովելի է, սակայն տեսականին մէջ միայն, գործնականին մէջ շատ անփոյթ. զանազակ եւ թոյլ նոյնիսկ դպրոցական սրտեց վճարմամբ. սիդն է յիշել, կառուածաւոր հարուստ մը՝ որուն անունը տալ չեմ ուզիր, եւ որ տալու միշտ տրամադրութիւն ունի, ու կը խոստանայ թէեւ. հակառակ իր զաւակները ազգ. վարժարանը յաճախելուն սակայն երկու երեք տարիէ ի վեր ոչինչ տուած է վարժարանին, հոգաբարձութիւնն ալ ձեւի, խախտ համար ձայն չը հաներ. բայց մենք կը յուսանք թէ մեր այս երկտողը խրթան մը կըլլայ նոյն հարուստի. եթէ ոչ պիտի ստիպուինք իւր անունը հրապարակաւ յայտարարել:

Տեղոյս վարժարանը միշտ բաց եղած է, եւ վարժապետներ շարունակ կուզան ու կերթան, բայց ի դուր. գործին սօտէն տեղեակ անձի մը անձանօթ չեն թերութիւնները—վարժարանը բաց պահել, վարժապետներ ունենալ ահա միակ յառաջադիմութիւնը որ կարծեմ միակ Սլիվէնի համար չէ. նախորդ 903—904 դպրոցական տարեշրջանին բաց էր մեր վարժարանը, ունէինք նաեւ վարժապետներ, եւ սակայն ոչ ոք գիտէ թէ ինչ արդիւնք ունեցածք. իրաւ է որ դպրոցին յառաջադիմութիւնը չազգիող մէկ հոգու թղթախաղութիւններ ունեցանք թէեւ. սակայն ինքնագոյական եղած այդ յօդուածները գուրկէին ճշմարտութեւն. սրտով բարի անձերէ կազմուած հոգաբարձութիւնը,

եթէ ճշմարտութիւնը բնիկ պէտք է. գարնան սեւին ոտքը դեռ ներս խոթած չունի. այս՝ կը հաւատանք թէ հոգարարութիւնը լաւ տրամադրութիւններ ունի. բայց խօսքով միայն, օրինաւոր ժողով եւն մեր հոգարարութեան համար չեն. ահապա ներքին ոմանք տեղէն մեկնած, ոմանք բողոքովին քաջութիւն միայն տանապետ Տիար հնի Սարգիս Պապանան է որ ընթացիկ գործերը կը վարէ. արդեօք ինչու... ուրիշն ապակէ գործ կը մնայ վարժապետներուն. եւ թէ անոնք իրենց մտքը աշխատին յուսալի է որ քարեկարգ վարժարանը եւ լաւ արդեւք ունենանք իսկ եթէ անհոգ ու առանց մասնաւոր ուղղութեան մը շարունակեն իրենց վերջին նախորդներուն պէս, կը վախ նամ թէ ազգին հագարաւոր ֆրանքները նորէն յուսալէտ վասնուին եւ ազգ. մանկան զոր տեղ երթայ ու գայ. Այս տարուան տեղոյս ուսուցչական մարմինը կազմուած է Տիարք Ա. Շիրազէ, Ա. Ունճուանէ, եւ Ա. Գրիգորեանէ. արքարեւ Սլովէնի համար առաջմ բաւական պէտք է համարիլ այս մարմինը. եւ շատեր իրական օգուտ մը ակնկալելու յոյսերն ալ ունին այս ուսուցչական խումբէն, բայց մենք մի քիչ յոռետես որչափ ալ հաւատք ունենանք պիտի սպասենք սակայն արդեւքին. նորիկներ իսկզբան հաւատք միշտ կը ներշնչեն մեզ, բայց հրը կը հիննան յուսալիս կը թողուն. Սլովէնի մէջ զրամբ չէ որ կը պակսի, այլ իրենց տէր պաշտօնեան՝ որ իր գործունէութեամբ ու եռանդով միայն պիտի սայ սպասուի իրեն եւ զարկ տեղոյս հայ համայնքին:

Երկու տարիէ ի վեր տեղոյս ազգ. եւ եկեղեցան գործերը կը կառավարուէին անժամանայ թաղ խորհրդով մը. վերջերս այդ խորհուրդն ալ իր մեծամասնութիւնը կորսնցնելով, թաղ խորհրդոյ նոր ընտրութիւն եղաւ. եւ թաղ խորհուրդը ընտրուեցան տիարք Ա. Ունճուան, Յ. Պողոսեան, հնի Սարգիս Պապանան, Սերոբ Բարսեղյանը եւ Միհրան Համամեան. ընտրութիւնը կանոնաւոր եղած է եւ ընտրեալք յուսալի է որ իրենց յիւստական եւ բարոյական կարողութեամբ օգտակար ըլլան ազգին եւ եկեղեցոյն: Նորընտիր թաղ խորհուրդը բաւական գործ պիտի ունենայ ինչպէս կերելի. անշուշտ պիտի պատրաստէ նա կանոնաւոր ել եւ մուտք մը՝ որ մինչ

գարգ չէ եղած. հոգ տանելով եկեղեցոյ բարեգործութեան, կը սիրենք յուսալ թէ օժանդակ պիտի ըլլայ պատ. հոգարարութեան պիտի նպաստէ վարժարանի յառաջդիմութեանը, մանաւանդ երկու տարիէ ի վեր անտեսուած հաշուեցոյցը ներկայացնելով ժողովուրդին, ո՛չ անկարող եղող անձանց վրայ տարիներէ ի վեր ազգին մեծագուծար պահանջները սիրաշունթեամբ գանձելով, պիտի գործածէ ազգին ամենակարեւոր պէտքերուն, խաթեր համար մինչեւ ցարդ չկարողաբուած այս խընդիրը, եթէ նորընտիր թաղ խորհուրդը ի գլուխ հանէ մեծ բարեք մը բրած պիտի ըլլայ ազգին, եւ արժանի շնորհակալութեան. սպասե՛ք եւ յուսանք:

Վահէ

Յ Գ.—Լերթին պահուն կրկնանք թէ տեղոյս տէր Լազրիակ քահանան ինչպստ երկրի կուղեբորուն 400 ֆր. ի գումար մը հանգանակած է եւ դեռ կը շարունակէ:

Նոյն

ՆԱԽԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Նոյն 17 Նոյմ. 1904

(Շար նախորդ թիւէն եւ վերջ)

Այս մենք գրապետը ոչ գրչներ քուն ունի և ոչ ալ ցերեկ. ամեն վայրկեան կը խորհի թէ ինչ նոր հայտնայնք ստեղծելու է, որ նոյնիսկ օձիկն ալ մաշտալայ ըսէ, Համախի հայ ծառաներին յատկապէս վարժուած է, որ զաշնակցութեան անոր գործընկերուն և աչքի զարնոց ընկերները հայհոյէ, և կընէ ալ ամեն շաբաթ առանց մոռնալու:

Այն պատմական և կուռ փաստերը, որոնք ժիրայր հաւաքեց ու երեւան գրաւ ու մէկիկ-մէկիկ խոթեց իրենց աչքերը՝ ոչ միայն իրենք—այդ վատերու վտնակը իրենց ամբողջ կուսակցութիւնովը միասին—անկարող են զանոնք հերքելու, այլ նաեւ նոյն իսկ իրենց սպազայ սերունդն ու Արարատեանն և նոր ծնունդիք Վասպուրականին կրմաներն ալ, առոնք, այդ սօքի մաները, պիտի մնան պոպոկատէ՛ս իրականութիւններ ապագայ պատմութեան մէջ, և ալ սեւ էջեր:

Գիտենք, որ կղզան արտաքին ծանրութիւնը, և ճառթ-ճուռթ ընե-

լով ու տապալկելով կը փորձեն մի քիչ մեղմացնել, ու ատոր համար է որ Փ. Պոլսէն (Պուլկարիա) մինչեւ Ա. մերիկայ վահէներ իրենց օգնութեան կը կանչեն, ու ժիրայրի հասցէին Հայոյանքի կոյտեր կը թափեն, բայց թող բնաւ չյօգնին, ի գուր է իրենց բոլոր ջանքերը, ժիրայրին տղեւայլ անականներ տալով չեն կարող անոր գրութեանց ազդեցութիւնը կոտորել:

Ամերիկայի հայ գաղութին մէջ իրենք—հազարաւոր տղարներ կը հանգանակեն (!) եղեր—այսպէս կը պատգամեն վահէները, և ինչ որ Դաշնակցութիւնը չկրնար, այսինքն ժողովուրդը անոր շտար, և կը պարծնանաւ ալ, բայց այդ դաւադիրները լաւ իմաց գիտնան որ Դաշնակցութիւնը թուականներու պէտք չունի բնաւ, եթէ անիկայ իրենց պէս ուզէ ժողովուրդին աչքը թող փչել, կրնայ իրենցմէ շատ աւելի թուանշաններ շարել, ու վերջն ալ ելլել ըսել թէ «գրութեանց բայց չը տունն», իրենց ընկերներէն մասնաւորապէս Կ. Ս. Բարազմանան չէր որ Փրօփիտէնսի իրենց մէկ հրապարակային ժողովին մէջ կըսէր ի միջի այլոց հետեւեալը.

«Ժողովուրդ՝ նազարբէկեանները մեզի կըսեն որ Միութեան ատեն իրենց հետ քսան հազար տուար հանգանակած ենք, ու կերեր, փտերեր ենք, միայն (8) ու թը տուար մնացած է, բայց այդ դաւաճանները ինչու է իրենց ըրածը ճիշտ չեն ըսեր, քսան հազար տուար որ գրութեան և կամ խօստացան, սուրին, ոչ, այդքան դրամէն միայն քսան մը հազար տուար հաւաքուեցաւ եւ այլն, և եթէ չեմ սխալիլ ատոր նման քսան մըն ալ «հայհոյութիւն» մէջ երեւցաւ Փրօփիտէնսէն այն ատենը:

Ամերիկայի մէջ չէ եղած գաղութ մը, որ ժողովուրդը իրենց աւելի զրամ տուած է քան զաշնակցականներու ճիշտ եղած է և կան գաղութներ որ իրենք լոկ թուանշան շարած են իրենց թերթին մէջ, զաշնակցականներէն շատ երեւցնելու համար, բայց իսկական այսինքն զուտ գրամ բնաւ, թողունք սակայն այդ կէտը իրենց, թող երթան այդ յոյսովը ապրին խեղճերը ժամանակ մըն ալ:

Գիտենք այժմ ուրիշ կէտի մը:

Փ. Պոլսէն մինչեւ Պոստըն իրենց օգնութեան վաղու վահէ մը կը հրպարտանայ, և թեւ առեր կը թոշի որ մենք չենք կրցած պատասխանել,

«հայհոյութիւն» զազասպան գրութիւններուն, սակայն կը մտնայ որ մենք ստիպուած չենք ամեն հաջողի փայտ երկնցներ, և ինչ կար այդ գրութիւններուն մէջը, զիկ-զիկ բաւաբու չեղնակոյտ մը. ուրիշ ոչինչ, եթէ վահէ այդ գրութիւնները այդքան շատ հաւանած ու սիրած է, մենք խորհուրդ կուտայինք իրեն որպէս զի Առաջնայ ընէ և ճիտը կայէ, ու հաստիմ ալ վատնա զրկէ Հասան Շէֆքիին, որովհետեւ, եթէ չենք սխալիլ, ան եւս շատ կը սիրէ այդպիսի դատարկ գրութիւններ:

Պարոն վահէ ինչու կը փոփոխէ, և լիտիօրէն կը հայհոյէ, երբ կընէ ժիրայր թէ պիտի ձեր դրամէն սակաւ գրամ մըն ալ չէք զոհեր երկրի պէտքերուն», կրնա՞ք ըսել թէ ձեր հաւաքած գրամներէն սանդիլ մը զըրկած էք երկրի ժողովուրդը զինչու համար», կրնա՞ք, բայց չէ՞ որ ձեր 8-9 տարուայ «անասուց» և մթնասուեք գործունէութիւնը մեր աչքին տոնէն է, Աւրիշ անգամ մը արգէն մը գործունէութեան մասին խօսած ենք, բայց կերելի թէ դուք մըն աչքին գերտու չէք ուզեր սեանել, կուսակցութիւն մը որ իր գոյութեան օրէն մինչեւ այսօր ուրիշ բան չէ ըրած եթէ ոչ պարզապէս հայ ժողովուրդի գլխուն «փորձանք» մը եղած է, այո՞, այդ կուսակցութիւնը չունի ու եւ է որոշ հողմացոյց մը, մէկ օր զէպի հարաւ կը քալէ, միւս օր հիւսիս, քամն որ կողմէն զօրաւոր ըլլայ անգին կը ծռի իսկոյն: Դուք Պ. վահէ որ յայտնի գրապետի մը և «անկեղծ» հայրէնսէնէրի մը հովիւրով կը թոշէք, ձեզի չէք վայելել որ երեւիք և քաջակերէք այդ հակայիտ. փոխական կուսակցութիւնը. դուք պէտք էք քիչ մը անաչառ և խելացի շարժելք, երբ անդին Մայր-Հայաստան արեւելի ծով դառցած է, ու նեւազհասէ աւելի ու աւելի կը վատթարանայ իր վիճակը, երբ հարկւարութեան անոր մերկ ու անօթի ատաւանգ կը թափանին դուք փոխանակ այդ ազգադուր Վատերը քաջակերելու, պէտք էր ուժ տայիք այն կուսակցութեան, որ իր գոյութեան օրէն մինչեւ այսօր 14 տարի, ունեցած է անշահախելի և փառաւոր գործունէութիւն մը, եւ իր ուժը ներսին չափով ջանացած է օգնել ու աւելի յառաջ տանել հայ ազգի ազատագրութեան մեծ գործը. գիտենք սակայն որ գործին սէրը և եռանդը չէ որ կը մղէ ձեզ այդ ճամբուն մէջ, այլ կուս-

Ա. ԱՄՏԻՅԵԱՏԻՈՎ
ՎԻԿՏՈՐԻԱ ՊԵՎԼՈՎՆԱ
—o—
(Տնայնաբնութիւն)
—
Գրագիտի յիշողութեան
րից, Ամրան արկածներ
բաւական տարօրինակ հա.
ստարակոթիւն մեք)
—
(Թարգմ. ուսուցիչից)
—
Ա

Բայց հիմա մեր վագոնում նստեցին Միխայիլ Ալեքսանովիչ, Զվերինցեւ ու Պավել Սկոնցովիչ Դուռնաչեակից երկուսն էլ տեղական կալուածատէրեր,

երկրորդ միւսնոյն ժամանակ զեմս կիյ նաչալիկ:
Նրանք էլ Պիօօլա էին գնում. կալուածատիրուհու՝ Վիկտորիա Պավլովնա Բուրմիսլովայի տօնախմբութեան, եւ բեռնաւորված էին ահագին պարկերով ու սոպակներով, որոնց նայելով եւ ամաչեցի իմ տարած անափուն շաքարեղենի եւ շաքարահացի համար, որոնք տեղաւորված էին իմ պայուսակում:

—Է՛հ, պարոններ, դուք կարգին պաշար ունեք, բացականչեցի ես:

—Հապա ինչպէ՛ս, հաստ ձայնով պատասխանեց Միխայիլ Ալեքսանովիչը՝ շէկ պիտերով եւ մազերով յիտուննոց մի հսկայ, անցեալում թողնելով շատ զբաղմունքներ, որոնք միասին մի կանքում չէին կարող իրար հետ հաշուել: Երիտասարդ հասակում նա եղել էր եպիսկոպոսական օտարաւազ, հասուն տարիքում սպայ

թիւնէս թրքական զօրաբանակում. 40 տարին լրանալուց յետոյ մայրաքաղաքի բայթի ստատիստ: Իր վերջին պաշտօնում իր հսկայական կերպարանքով նա գրաւել էր սիրտը մեր նահանգի մի կալուածատիրուհու, որ մի խոշոր թացիկ, զգոյուն, չար եւ մեղօտարմական տեսարանների յակում ունեցող վաճառականի կին էր:

Աւ ամենաօրինաւոր ամուսնութեամբ մեր Միխայիլ Ալեքսանովիչը մեր նկարագրած հրաշալի տիկնոջ հետ անցնում էր իր կեանքը իրիւս խաղաղ գաւառացի եւ ոչ վատ հայր:

—Ուրիշ կերպ ի՞նչպէս կարելի է, շարունակեց նա, կացութիւնը այստեղի է, սրտաբացութիւնը եւ ատենը Վիկտորիա Պավլովնայից—իսկ հիւրասիրութիւնը մեզմից: Նա ինքը որ տեղից վերցնէ. ծիծեռնակի պէս մերկ է: Նրա անշարժ կալուածքը կազմում են իր մօրաքոյրը՝ Աննա Սիմէօնով-

նան, որ տաս տարուց ի վեր առանց ետին ոտքերի սենեակում պարկած է իսկ շարժուն կալուածքը ծնողքից մը նացած զղեակը, որ մի լաւ քամուցնցումից ջարդ ու փշուր կը լինի իսկ Վիկտորիա Պավլովնան պարտաւոր է ամենաքիչը 20—25 հոգու կերակրել, խմցնել, հերքննել էլ իրեն նոյնը... պէտք է ոգնել գեղեցիկուհու ձեր տեսածից բացի, երկու շնուվերտ էլ հորթի միս ապրանքի վագոնով եմ տանում:

—Իսկ ես մի արկղ գիւնի, մի գըլուխ շաքար, մայրօտեան երջիկ... սսեց Զեմսկիյ նաչալիկը, երեսայի պէս Բ եւ ձայները արտակարգօրէն կոտորեցով:

Պետր Պետրովիչը իր կողմից միջամտեց:

—Ես էլ մի գըլուխ շաքար, 20 ֆունտ թէյ, մի գըլուխ պանիր, եւ խողի ապուխտ:

սակցութեան կիրքն ու ատելութիւնը, ինչո՞ւ այդքան անսիրտ զէպի Դաշնակցութիւնը, որ տղէկ կամ գէշ կը գործէ երկրին մէջ, իսկ այնքան հըպարտ և սիրող դէպի վերակազմեալ հնչակեան կուսակցութիւն ըսուածը, որ հազիւ կարող կըլլայ իր վարձկան գործիչները պահել:

Ձեր հայտնածները ու սպասանալիքները չեն որ մեզ պիտի կրնան վախցնել, ու ես կեցնել յեղափոխական գործին ուժ տալէ, մենք ուստի մենք մինչև վերջը շարունակել և հոգ չէ թէ դուք այդքան ապերաշտ կը գանուիք դէպի մեզ, կը լուսամբ քիչ մը կրցնիք հասկցնել ձեզ, ո՞վ մեզ վաճէ, եթէ ձեր գրքին մէջ քիչ մը կուտ կայ, քովերնիք պահեցէք, որովհետեւ նեղ օր մը պէտքը կըլլայ ձեզի:

Այս ինկածները մինչ մէկ կողմէն իրենց բոլոր ճիշդ կը թափեն Դաշնակցութիւնը վարկարհկելու, ինչու սակար կուսակցութիւն մը ցոյց տալու, միւս կողմէն սակայն չեն ամբշնար պոչիկ» արորել անոր առջեւ, և միանալ ցանկալ:

Եթէ իրօք Դաշնակցութիւնը ինչու սակար կուսակցութիւն մընէ իրենք ինչպէ՞ս կը շատարձակին անոր հետ միանալ ցանկալ: Իրենց այս քայլովը արդէն կապացուցանեն թէ, իրենք Դաշնակցութեան մասին կուսարեւել վստահութիւն ունին և կը հաւատան թէ անիկա իրենցմէ շատ աւելի զօրւոր է. ընդհակառակը Դաշնակցութիւնն է որ իրենց վրայ վստահութիւն չունի, և չուզի միանալ:

Դաշնակցութեան տուած այն ասպետական պատասխանէն — միութեան խնդրի առթիւ — արդէն իրենք պէտք էր քիչ մը խելի գային, և լաղրէին կարմիր Սուլթանի փաստաբանները ըլլալէ, փոխէին նաեւ իրենց էնտրիգական և դաւաճան ընթացքը ու մտնէին ուղղակի յեղ. արիւնտ ճամբուն մէջ, բայց իրենք ոչ միայն այդ շրջին, այլ նաեւ շարունակեցին ու կը շարունակեն այժմս ալ Միութիւն» «Միութիւն» պոչու:

Տղեկին մէկն ալ սնայոյտաթիւրքի մէջ այս վերջերս կարգ մը խոստար գրութիւններով, որոնք անցեալին մէջ շատ անգամ արդէն կրկնուած էին, կուզէր ցոյց տալ հայ հասարակութեան թէ ինք ԱՆՍՏՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ գտած է եւսլին, բայց Աստուած իմ ի՞նչ գաղտնիք. եկուր տես որ երկխոսները նոյնիսկ այդ գի-

տէին: Ասկէ տարիներ առաջ եղած միութեան բանակցութիւններու մասին ալ կարգ մը արեւել-ցփեղ բաներ փչեց այդ տղեկը, և վերակազմեալ-Հնչակեան կուսակցութիւնը մինչև եօթներորդ երկինք բարձրացուց. խնդրէր առաջին անգամ էր որ երեւան կեդէր հայ լրագրութեան մէջ, կերեւի քաջալերուեցաւ իր այդ երկարապատու ու տափակ գրութեանց համար, որ զեռ չի ուզեր վերջ տալ, բայց չէ. ժամանակը և մարդիկ փոխուած են այլեւս, այսօրուայ հայ երիտասարդութիւնը — ուրախ ենք ըսել — կրցած է ճանչնալ այդ ապիկարներու խումբը և ոչ միայն չը քաջալերեր այդպիսի յիմար և անճոռնի գրութիւնները, այլ նաեւ գիտէ ծաղրի և ծանակի առարկայ դառնել, և այն վատերը թող շարունակեն այժմ իրենց տափակ գրութեանց շարքը, և օրը տեսակ մը յիմարութիւններ թրխան իրենց թերթերուն մէջ, Ազատ են:

Միութիւն կուզեն, լաւ, բայց ինչո՞ւ համար իրենց «անկեղծ» միութեան փափաքող ըլլալը գործով ցոյց չեն տար, եթէ անկեղծ են թող հըրամմեն ուրեմն գործքով ցոյց տան իրենց անկեղծ ըլլալը. խօսքին ժամանակը անցած է այլեւս, գործիգարին մէջ կապիւնք այժմ, գործ և գործ:

Նոտանդ-նարոս

Պատասխան առ Պ. Յ. Բակլանեան

Թէեւ ուշ, բայց վերջապէս կարգացի ձեր մէկ պատասխանագիրը, և որպէս զի արդէն չըղազար ամբողջութիւններդ ալ անտարբերութեան խոր քունէն ըստփութի ու աչքերնիդ լայն բացուի շուրջերնիդ վիտայցող աղտոտութիւններու վրայ, ձեր «հըրաւէրին» համեմատ կը փութամ «փաստացի» վկայութիւններով աւելի ուժգին հաստատել նախապէս զրածներս: Ե՛տ ուրախ պիտի ըլլամ, եթէ կարենաք զձեզ փրկել այս և ապագային արուելիք շարունակական խարազանումներէն:

Այս թէ ամօք շանէն վաճառուած եմ եղեր: Այս խնդրուկ կարծիքներդ այնչափ սուտ է, որ չափ

ձեր անձը կեղծ և միտքը մթուած է, վասն զի ես չորս տարի պաշտօնավարութենէ վերջ անկէ հեռացած եմ պարզապէս արական կրթարանին փակումին պատճառաւ, ասկէ զատ արդեօք վըռնուած մէկը ի՞նչպէս կարող է իր ձեռքն ունենալ տեղւոյն հոգարարութեան վկայականը որ արեւոք պաշտօնավարութիւնս գովեստով հաստատող, ի՞նչպէս կրնայի ունենալ նոյն քաղաքին քաղաքագետին կողմէն ինձ տըրուած վկայագիրը, որով հաստատուութեան մէջ անբասիր ըլլալս կը վաւերացնէ պաշտօնապէս, վերջապէս ուսմէն կրթական նախարարութիւնը ի՞նչպէս կրնար ինձի ուսուցչական վկայական շընորհել և անցուցած փայլուն քննութիւնս վարձատրել՝ քանի որ անարգուած մէկն եմ: Պ. Բակլանեան այս բաները ստելնիդ զձեզ ստույթեան թագաւոր հռչակել կը նշանակէ և քանի որ ձեր քիթը տակ պատահածները շտեմնելու չափ կոյր էք, գոնէ ակնշնուդ բուրդը հանեցէք, հարցուցէք ու ճշմարտութիւնը լսելով՝ հրապարակաւ խօսելու շատ կարճ խելքն ունեցէք:

Բ.— Իբր թէ որսկորի ցաւ ունեցած եմ և այն ալ Արիս Լազար կամ զնաղիկ հանրմիւսն պատճառով, վասն զի նա որսկոր արգելք գարձած է եղեր իմ ընկերութեան քով հաշուակալ ըլլալու ձգտումիս: Կը ցաւ իմ որ, այդ խեղճուկը նախատինքներէս խելակորոյս՝ կաթիլ մը արժանապատուութիւն և պուտ մըն ալ համարձակութիւն առնելով անձամբ հրապարակ իչնել չ'ժամէ զատ: Գժքախտութիւնն ունեցած է ձեզ պէս անմիտի մը թղթեայ վահանին տակ ծածկուիլ և ձեր ինքզինքնիդ քսկ չկրնալ պաշտպանող ձախող փաստաբանութեանը կարօտիլ: Այդպիսի զնաղիկ հանրմիւսն մը անունն յիշել իսկ անարգանք է այլեւս: Ապա ու-

րեմն, Պ. Բակլանեան այդ տեսակ ինկածի մը հարգելը ի՞նչ արժէք կուեննար իմ հաշուակալ ըլլալու փորձերուս՝ եթէ երբէք ըրած եմ: Կը ստէք հոս ալ, վասն զի պուք և ձեր պաշտպանած պողբոք էք ՅՍ ֆրանկ ամսուկանի համար ամէն նախատինքներու ենթակող ու վերջը վորնուող: Ի՞նչու չէք յիշած թէ ձեր պաշտպանեալը տարիներ առաջ անօթութենէն նքտած ու յուսահատած՝ ինքնուսպանութեան փորձ մը ընելէն յետոյ 30 ֆրանքով ընկերութեանը քով մտած է. եթէ ուրիշ պաշտօն մըն ալ ունի այսօր, ան ալ խոսքին պատուաւոր (°) միջնորդութեան արդիւնքն է. կուրանա՞ք: Եւ որպէս զի ստախոս մը ըլլալնիդ փաստով հաստատուի, վարը կը զնեմ նոյնիսկ ընկերութեան գործագիր վարչութեան պաշտօնական հերքումը, որով կը շեշտուի իմ բնաւ հաշուակալ ըլլալու համար դիմում չընելու:

Գ.— Եթէ ձեր պաշտօնավարութեան և նաղիկ հանրմիւսն քարտուղարութեան օրով եղած հաշիւները «քննիչ յանձնաժողովի կողմէն կանոնաւոր գտնուած և ստորագրուած է» եկեր: Ահա յանձնաժողովի անդամներուն վըկայութիւնը:

— Զերքում: Քաղաքիս հայ առեւտրական ընկերութեան հաշիւներուն քննիչ ստորագրեալ անդամներս՝ որանուն բացարձակ ճշմարտութեանս՝ կը փութանք հրապարակաւ յայտարարել թէ, դեռ ընկերութեան ամբողջ հաշիւները չենք քննած վերջնականապէս և Պ. Բակլանեանի վերագրուած զեղծումներուն սուտ ըլլալը չենք հաստատուած, հետեւաբար մեզի համար անպարկեշտ սուտեր են Պ. Բակլանեանի մեր անուամբ ըրած հրապարակային հերքումը Պ. Սարսափի զէմ: Գրիգոր Նաղաշեան, Ս. Ակորեան (պօսթբոլոր), Սիւրբմ կարապետեան:

— Պարոններ, գոչեցի ես, ձեր այդ բոլոր ասածից յետոյ, ինձ մըրում է ամենաուսուիկ կայարանում հըրածելու տալ ձեզ, կարելի է ասել, որ ես դատարի ձեռքերով եմ գնում, աղքատի պէս, և միայն չեմ ուզում ներկայանալ այդպիսի ամօթալի դըրութեան մէջ:

— Այ քեզ, միջամտեց Միտայիլ Ազգուստովիչը, դուք մեզ մօտ նոր մարդ էք, առաջին անգամ հրաւիրված... ո՞րտեղից գիտնայիք, վիկատորիս Պավլովան կը հասկանայ:

— Կը հասկանայ, հաստատեց Պետր Պետրովիչը:

— Վերջապէս դուք կարող էք զրամ էլ տալ, շատ պարզ է. հանգստորէն առաջարկեց զեմակիլ նաչախիլը:

— Ես աչքերս լայն բացած նայեցի զեմակիլ նաչախիլին՝ ասելով:

— Բայց այդ ի՞նչպէս, ի՞նչու տէք ձեզ շեղարեւորել գեղուհի, ձեր տօնը

եւ բարեհաճեցէք սրա հետ միասին եւ ընդունել 25 րուպլանոցը, Աժուած հետք, Պավել Սէմէնովիչ:

— Ինչո՞ւ այդպէս, պարզէն առարկեց զեմակիլ, այդ բոլորովին այլ կերպ է կատարվում: Մեզից էլ ոչ ոք անձամբ հորթի մտով եւ շաքարի գլխով չի մօտենայ վիկատորիս Պավլովանին, նա իր աչքերով չի տեսնի այդ ամենը, Մենք նրան, ինչպէս վայելու է, կը մատուցանենք կամ ծաղկիփունջ, կամ շաքարահաց, կամ շաքարեղէն, կամ պտուղ. իսկ հորթի մտը, գիւնին, շաքարի գըլխիները եւ այլն կընդունի Արիսա Յեղօրովան:

— Իսկ այդ ո՞վ է:

— Վիկատորիս Պավլովայի կուսավարչուհին եւ տնտեսուհին. ընդմիջեց Պետր Պետրովիչը, իրէպս է յիշել, այս թռչնիկի գլխով ցոյց տալով վանիչկան, հարազատ մայրը:

Վանիչկան հաճոյքով ժպտաց:

— Դրանից էլ լաւ մանչեց Միտայիլ Ազգուստովիչը, ինչքան որ կուզէք, յանձնեցէք Վանիչկային, նա էլ կը յանձնի: — Վանիչկա կարող էս յանձնել, թէ չէ Ալէքսանտր վալենտինովիչը նեղուած է անձամբ յանձնել:

— Ինչո՞ւ չէ, մեծ հաճոյքով. պատասխանեց Վանիչկան: Սովորական բան է, համեցէք:

— Պարոններ, ուրեմն, այս պարագային հասկացրէք ին որչափ տալ վայելու է... գիտէք յանկարծ իմ օրէնքով ուրիշի վանք չը մտնեմ:

— Է՛հ, դուք երկար էք ուզում մընալ վիկատորիս Պավլովայի մօտ:

— Կուզէի հէնց վաղը ետ դառնալ:

— Բոլորն էլ բարձրաձայն ծիծաղեցին:

— Վայ կատակող, որուաց Միտայիլ Ազգուստովիչը, ինչ հնարեց. ե՞րբ է

պատանել որ ու ե է մէկը վիկատորիս Պավլովայի մօտից երեք օրից շուտ հեռանայ, Պարոն այս սօնախմբութիւնը մեր արձակուրդն է, կան որ շաքարով, ամսով են այնտեղ հիւր մնում: Եւ երբեք սրտ կայրպոյնի կղզին է մի կերպ: Ամեն մարդի հաճելի է առանց սխրութեան ժամանակ անցնելու...

Հետեւեալ կայարանը մեծ էր, բիւֆէով, Միտայիլ Ազգուստովիչը գոչելով:

— Եւտենք, պարոններ, ու տեղիցը վերկացաւ, բայց վագոնի պատուհանից դուրս նայելով շտապով ու հեզութեամբ տեղը նստեց, նոյն իսկ մէջքը կայարանին դարձրեց:

— Ելելով վիկայի, կեդիպով կը նոյն հետ քալ են զալիս կայարանի սալահատակի վրա, ակունքերի տրանքով մտնաց Միտայիլ Ազգուստովիչը: Ստանան է բերել զրանց:

(Շատուակնիչի)

Այսչափ ակնբերե փաստերէ վերջ, առայժմ կը գոհանամ միայն աւելցնել թէ ձեզ պէս անպատկառ, անխելք և գաղթականութեան արիւնք մտնող խառնակիչներու համար յաւանանական արհամարհանք տեղալու միշտ պատրաստ ըլլալով Պ. Բակլաճեան, կը մագիթնմոր՝ ըստ սովորականին՝ հաւորուիք ձեր տան մէջ Վրիս Նազիկ հանրմի և իր մատնիչ աներձագ Չիլիկիբեանի հետ աղի արցունքներով աշխարհելու և կամ նորէն մէկուն գէժ դաւելու համար:

Մնամ ա՛մենայն անարգանօք ձեր ճշտութիւն ճանչցածը որ է Սարսափ
Նոյեմ. 20 1904
Պոլսէջ

«Քաղաքիս հայապատկան վարչութիւնը կը յայտարարէ թէ, Պ. Պարսափ» երբէք ընկերութեան հաշուակալ ըլլալու համար դիմում ըրած չէ և հետեւաբար մերժուելու ալ տեղի չէ տրուած»:

(Կնիք վարչութեան)
19 Նոյեմ. 1904
Պոլսէջ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլիս կը գտնուի հռչակաւոր գերասանուհի Սարա Բերնար. ան կուզէ եղբ 5 ներկայացո մտալ, բայց կառավարութիւնը երկու բիէսները արգիլած է. արգիլուածներէն մին Սարգուի «Թէստորան» է:

— Պոլսոյ մէջ կըսեն Պուլկարներու գէժ հալածանք սկսուած է:

— Բ. Դուռը կը կին կը մերժէ Մակեդոնիոյ մէջ եւրոպայի սպաներու թիւը աւելցնելու համաձայնութիւն տալ:

— Սօֆիայի նոր գոմիսէր Սատրկ փաշա արձակուրդի երթալով Պոլիս նպատակաւ կարծիք ներյայտնած է Էտիքնէի գաղթականներու թուրքիա վերագարձի մասին:

Այս խնդրին կարգադրուիք հաւանական կերելի:

Տարսանիչի խնդիրը

Բեթերսպուրկի անգլիական դեսպանատան մէկ պաշտօնեայ յայտարարած է որ Անգլիա երբէք չի թոյլատրեր որ Սեւ ծովեան նաւատորմի ճարտաններէն անցնի, նախ անոր համար որ ճարտնի դաշնակից է, երկրորդ որ անցնելովը Բարիզեան փաշնագրութիւնը պիտի խաղաղուի ու պատճառէ շատ մը քաղաքական մեծ բարդութիւններ:

ՌՈՒՍԻԱ

— Սեւ ծովեան նաւատորմի ղեկավարութիւնը արգէն որոշուած խնդիր է:

Նոյեմբեր 24ին ճաշէն վերջը նեվաքիյ պոզոտային վրայ ժողովուրդը ուզեր է ցոյց մը ընել, սակայն ոստիկանութիւնը արգիլեր է. շատ մը ուսանողներ ձերբակալուած են:

— Միւսկին ներքին գործոց նախարարը պիտի համաձայնի որ այսուհետեւ արտոման ենթարկուին միայն դատարաններու որոշումով, բայց ոչ ոստիկանական վարչութեան որոշումով, ինչպէս առայժէր:

— Ազնական պարագլուխներու ժողովը յետաձգուած է փետրվարին:

Այս անգամ միայն 17 հոգի հաւաքուեր են:

— Ֆինլանտիոյ կառավարիչը ֆինլանտական երեսփոխանական ժողովը բացեր է Յարի մի գրած ճառովը:

— Իշխան Մէշչերսկի, պահպանողական հռչակաւոր հրապարակագիր 15 օրուան բանտարկութեան դատապարտուած է պատական Օթախովիչը իր թերթին մէջ զրպարտած ըլլալուն համար: Այս առաջին անգամն է որ Մէշչերսկի կը պատժուի ազատական մը զրպարտելուն համար:

— Հուլի միջազգայի մէջ յայտնի ծովային սպայ կառնո գատապարտուած է 15 օրուան բանտարկութեան, որովհետեւ նոյն վոէ վրեմիսին մէջ քանի մը յօդուածներով մեծ մեղադրանքներ կը բարդէ ծովային նախարարին վրայ:

Ռուսիա և Անգլիա

Լոնտօնէն նոյեմբեր 27ին կը հեռագրեն թէ Յարը հրամայած է Անգլիական նաւային սպաներուն, որոնք Չեմուլթօի քով եղած ճակատամարտի ատեն օդնութեան հասան ուսական վարեազ և ֆօրէց զրահաւորին պաշտօնեաներուն, նուիրել արծաթեայ վագեր, 500 անգլիական ոսկի ալ Անգլիոյ թագաւորական ծովային հիմնական դրամազլիին, որուն նախագահը գահաժառանգն է:

Սերգիս

Վիէննայի տի «Յայթ» թերթը Պելկրատէն կիմանայ որ շատ մը երիտասարդ սպաներ մեծ մասամբ հեծելազօրքէն մտադրուած են զօրքէն հեռանալ, մէկ քանիսը արգէն հրաժարականին աուած են:

Սպաներու այդ տրամադրութեան պատճառը այն է որ ալ չեն կրնար համբերել իրենց վրայ եղած անուշադրութեան, որ տեղի

կունենայ շնորհիւ դաւադիր ըսպաներուն:

ԱՂԱՆԻՍՏԱՆ

Յվղանիստանի Էմիրը զօրք կը ժողուէ և զէնքի պատրաստութիւն կը տեսնայ ուսական պատահական յարձակումի մը զէժ պատրաստ ըլլալու համար:

ՅՐԱՆՍԱ

Ժէնէրալ Անտրէն ապտակող երեսփոխան Օրֆթօն, որ մօտերս դատարան պիտի ներկայանար, իր զրատենական մէջ ծխահեղձ եղեր է:

ՏԱՆԻՍՏԱՐՔԱ

Խրիսթեանայէն կը հեռագրեն որ հռչակաւոր թատերագիր Հենրիխ Իպսէն ծանրապէս հիւանդ է և հեռզհետէ աւելի ուժասպառ կ'ըլլայ:

—)o(—

ՉԻՆԱՍՏԱՆ

Պօքսերներու մեծ խռովութենէ մը կը վախցուի. կըսեն որ հռչակաւոր Բունգ իշխանը կըրկին մէջտեղ ելեր է այս անգամ նպատակ ունենալով ներկայ կայսրը գահընկեց ընել, որովհետեւ եւրոպացիներէն շատ կազդուի:

—)o(—

Թիքիթ

Չին կառավարութիւնը մտադիր է թաթար մէնէրալ մը նըշանակել թիպէթի զօրքը օտար պետութեանց զօրքերուն նման կազմակերպելու համար:

ՌՈՒՍ—ՃՍՔՈՆԱՎԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ղ Մ

Տէյլի թէլէկրաֆ կը հազորդէ որ ուսաները այժմ Մուկտէնի քով 400000 զինուոր ունին, որոնցմէ 40000 հեծելազօրք է:

—Ճարնացիները մինչև հոկտեմբերի կէսերը իրենց կորուստը կը հաշուեն 3000 սպաննուած և 10000 վիրաւոր Բորթ Ար. իքով Վերջին յարձակումներու ատեն ճարնացիները աւելի մեծ կորուստներ ունեցեր են:

—Թօքիոյէն նոյ. 29ին կը հեռագրեն որ ճարնացիք կը շարունակեն Բորթ Արթուրի ուս նաւերը ուժակոծել:

—Ճարնացիները հաստատուն ամբողջութիւններ կը շինեն Լիաօեանկի և Եանթայի յօտերը:

—Ճարն կառավարութիւնը նաւային ընկերութեանց հրահանգեր է. որ նաւերը 20 մղոնի չափ հեռու մնան Մկնորսական կղզիներէն. Ծորմօզայի արեւմտեան ափին կողմէն:

—Բորթ Արթուրի վրայ եղած վերջին յարձակումներու ատեն

սպաննուած են ժենէրալ Նօ. ծուր երկու տղաքները:

—Ճարնական երեսփոխանական ժողովը իր մեծ գոհունակութիւնը յայտնելով ճարն զօրաբանակի և նաւատորմի ըբած սիրազորութիւններուն համար, իր շնորհակալութիւնը յայտնած է թէ զօրքին և թէ նաւատորմի զին:

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱՆԻ ԳՐԲԵՐ

Ռ. Խանապարեան

- 1.— Իտէալիզմ թէ մատէրիալիզմ. Ուսումնասիրութիւն թափրիզ
- 2.— Պոլ Լաֆարգ Սօցիալիստական պարզ ճշմարտութիւններ, թարգմանութիւն ֆրանսերէնից
- 3.— Վրէժ Բանաստեղծութիւններ Վարդան Քամախեանց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Շնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Որոշութեան հրատարակած Հայաստանի Քարտէզը, շքեղ կազմով:

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս րուպլի. Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աժան ու բաւական իր նամքով պատրաստուած քարտէզը:

Հասցէ՝

Իւնիօն Տէ Էսիւսեան Արեւիկին S'korovay

Րիւ ռը շէֆոյ ռը Շիւի ժէնէլ
Եւ Վառնայի մէջ կը ծախուի «Քարկէն-Սիւնի» ընթերցարանի մէջ:

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տարին վերջնապու յօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժանորդները չեն վճարած:

Կան և այնպիսիներ որոնք երկու տարեկան պարտք ունին: Ինչպէս կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէժբը ձրի կառնենք, զրաշարները ու սպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օղով կապրինք:

Ի՞նչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին Բերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ:

Խմբագրութիւն

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна